«ՍԵՎԱՆԱ ԼՃԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀՈԴՎԱԾ 16. ՍԵՎԱՆԱ ԼՃԻ ԷԿՈՀԱՄԱԿԱՐԳԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ, ՊԱՀՊԱՆՄԱՆ, ՎԵՐԱՐՏԱԴՐՄԱՆ, ԲՆԱԿԱՆՈՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ և ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՈԼՈՐՏՆԵՐՈՒՄ ~~ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ~~ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԼԻԱԶՈՐՎԱԾ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄՆԻ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆԸ

Սևանա լճի էկոհամակարգի վերականգնման, պահպանման, վերարտադրման, բնականոն զարգացման և օգտագործման ոլորտներում ~~բնապահպանության~~ շրջակա միջավայրի պահպանության բնագավառում լիազորված պետական կառավարման մարմինը (այսուհետ՝ լիազորված մարմին)՝

ա) մասնակցում է Սևանա լճի էկոհամակարգի պահպանության պետական քաղաքականության մշակմանն ու իրականացմանը.

բ) իրականացնում է վերահսկողություն բնապահպանական օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ.

գ) մշակում է առաջարկություններ՝ ծրագրային խնդիրների լուծման համար.

դ) պատվիրում է Սևանա լճի էկոհամակարգի վերականգնման, պահպանման, վերարտադրման և օգտագործման ուղղությամբ գիտատեխնիկական հետազոտություններ ու ճարտարագիտական աշխատանքներ.

ե) վերահսկում է Սևանա լճի ձկնատեսակների և խեցգետնի, ինչպես նաև ցամաքային և ջրային բույսերի և կենդանիների արհեստական վերարտադրության գործընթացը.

զ) իրավասու է տնտեսավարող և այլ սուբյեկտներից պահանջել կենտրոնական, անմիջական և ոչ անմիջական ազդեցության գոտիներում բնապահպանության և բնօգտագործման վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվություն, ինչը լիազորված մարմին է տրամադրվում դիմելուց հետո՝ տասնօրյա ժամկետում.

է) յուրաքանչյուր եռամսյակի վերջում հանրային հեռուստառադիոընկերությամբ հաղորդում և մամուլում հրապարակում է Սևանա լճի էկոլոգիական համակարգի վիճակի մասին տեղեկատվություն.

ը) կազմակերպում է իր իրավասությունների շրջանակներում գտնվող հարցերի հասարակական քննարկումներ.

թ) կազմակերպում և համակարգում է մոնիթորինգային աշխատանքներ.

ժ) իրականացնում է սույն օրենքով, այլ օրենքներով ու իրավական ակտերով սահմանված այլ լիազորություններ: